ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2025թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԱՇՈՏ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն ականավոր զինագործ, արցախյան պատերազմի հերոսամարտիկ Աշոտ Քալանթարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Վարդանանց փողոցի հ.11 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՇՈՏ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Աշոտ Քալանթարյանը ծնվել է 1925թ., Լոռու Արդվի գյուղում: Մինչև ութերորդ դասարանը սովորել է Ս.Շահումյանի անվան դպրոցում, այնուհետև ռազմաօդային ուժերի հատուկ միջնակարգ դպրոցում: 1943թ. զորակոչվել է բանակ: Ավարտել է Սերպուխովի անվան օդաչուական դպրոցը և մեկնել ռազմաճակատ, մասնակցել Հայրենական պատերազմի մարտերին:

1951-1953թթ. պատերազմի ավարտից հետո սովորել և ավարտել է Լվովի ռազմական հետախուզական դպրոցը և ծառայել արևմտյան Ուկրանիայում: 1955թ. վերջին զորացրվել է: 1962թ. ավարտել է Մոսկվայի էներգետիկ ինստիտուտի էլեկտրոֆիզիկայի ֆակուլտետը: Երևանում աշխատանքի է ընդունվել նորաստեղծ ՄՄԳՀԻ (Մերգելյան ինստիտուտ)՝ որպես ինժեներ: Ավարտելուց հետո՝ մինչև 1967թ., աշխատել է «էլեկտրոն» գործարանում՝ որպես ավագ ինժեներ:

Կյանքի հինգ տարիները նվիրել է Հայրենական մեծ պատերազմին, երեք տասնամյակ աշխատել է հանրապետության տարբեր գիտաարտադրական միավորումներում՝ որպես գլխավոր ինժեներ և կոնստրուկտոր, արտադրության պետ, նաև տնօրեն:

1967-1970թթ. գործուղվել և աշխատել է Աբովյանի «Չափիչ» գործարանում՝ որպես գլխավոր կոնստրուկտոր, 1970-1972թթ. Հրազդանի «Ռադիոբաղադրիչներ» գործարանում՝ գլխավոր ինժեներ, 1972-1974թթ. Երևանի ավիահամալիր գործարանում՝ որպես արտադրության պետ:

1974-1993թթ. աշխատել է «Էլեկտրոպրիբոր» միավորումում՝ նոր կառուցվող Աշտարակի մասնաճյուղի տնօրեն, իսկ թոշակի անցնելուց հետո, 1985թ. միավորումում՝ որպես ավագ ինժեներ:

1988թ. դեկտեմբերի 8-16-ը մասնակցել է Սպիտակում տեղի ունեցած երկրաշարժի փրկարարական աշխատանքներին:

1989թ. Ա. Քալանթարյանը, որպես բարեգործական աշխատանքների կազմակերպիչ, գործուղվել է Հադրութի շրջանի Սպիտակաշեն գյուղ: Այդ շրջանում Արցախում հայ-ադրբեջանական հակասությունները օր օրի ավելի էին լարվել: Ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպումը դարձել էր գերխնդիր:

1990թ. Քալանթարյանը գործուղվել է Գետաշենի ենթաշրջան՝ կազմակերպելու ստրատեգիական նյութերի, զինամթերքի տեղափոխման և պահեստավորման աշխատանքները: Այս աշխատանքներին համընթաց, նա զինվորագրվել է Մարտունաշենում գտնվող Գուրգեն Առաքելյանի ջոկատին և, որպես ազատամարտիկ, մասնակցել է բոլոր մարտական գործողություններին:

1991թ. մայիսին Աշոտ Քալանթարյանը, վերադառնալով Շահումյանից, մեկնել է հանրապետության այն շրջանները, որտեղ մարտական գործողություններ էին ընթանում (Սյունիք, Կապան, Վայոց ձոր): Ամենուր նա անձնազոհաբար կատարել է ցանկացած մարտական առաջադրանք:

Հայրենիքին մատուցած ծառայությունների համար Ա. Քալանթարյանն արժանացել է պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի հատուկ պատվոգրի:

1998թ. Աշոտ Քալանթարյանը պարգևատրվել է ՀՀ ԵԿՄ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐԱՊԱՀ» հուշամեդալով:

Աշոտ Քալանթարյանը մահացել 2005թ. օգոստոսի 8-ին:

Ականավոր զինագործ, արցախյան պատերազմի հերոսամարտիկ Աշոտ Քալանթարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Վարդանանց փողոցի հ.11 հասցեում փակցնելու միջնորդությունը ներկայացվել է Ա.Քալանթարյանի դստեր՝ Մարինե Քալանթարյանի կողմից:

Հուշատախտակի տեղադրման ֆինանսական ծախսերը կատարվելու է ընտանիքի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ